

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

2023-2025

**ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ
ԾՐԱԳՐԻ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ**

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառին պետական բյուջեով հատկացված ծախսերը (առանց պետական կառավարման մարմնի պահպանման ծախսերի) 2020 թվականին կազմել են՝ 17,718,432.5 հազ. դրամ, որից 13,651,738.4 հազ. դրամն ուղղվել է «1162 Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների» ծրագրի միջոցառումների իրականացմանը, 3,854,972.4 հազ. դրամը՝ «1119» ծրագրին՝ պաշտպանության բնագավառում գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտությունների իրականացմանը, 82,894.8 հազ. դրամը՝ «1111 Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության» ծրագրի 12003 և 12006 միջոցառումներին՝ ասպիրանտական և դոկտորանտական կրթության մեջ գտնվող անձանց կրթաթոշակների և գիտական կադրերի պատրաստման համար նպաստների տրամադրմանը, 52,826.9 հազ. դրամը՝ «1192 Կրթության որակի ապահովում» ծրագրի 11005 միջոցառմանը՝ ՀՀ-ում գիտական որակավորման, գիտական աստիճանի և գիտական կոչման վկայագրերի հանձնման, միջազգային կապերի զարգացման, ատենախոսությունների թվայնացման և գիտնականների շտեմարանների ստեղծման ու շահագործման գործընթացների իրականացմանը և 76,000.0 հազ. դրամը՝ «1169 ՀՀ պաշտպանության ապահովում» ծրագրին՝ «Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գիտատեխնիկական (ռազմատեխնիկական) ուղեկցում» 11006 միջոցառման ֆինանսավորման նպատակով, 2021 թվականին՝ 19,947,242.1 հազ. դրամ, որից 15,149,247.2 հազ. դրամն ուղղվել է «1162 Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների» ծրագրի միջոցառումների իրականացմանը, 4,574,223.3 հազ. դրամը՝ «1119» ծրագրի 11001 միջոցառմանը՝ պաշտպանության բնագավառում գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտությունների շրջանակներում կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների իրականացմանը, 94,944.7 հազ. դրամը՝ «1111 Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության» ծրագրի 12003 և 12006 միջոցառումներին՝ ասպիրանտական և դոկտորանտական կրթության մեջ գտնվող անձանց կրթաթոշակների և գիտական կադրերի պատրաստման համար նպաստների տրամադրմանը, 52,826.9 հազ. դրամը՝ «1192 Կրթության որակի ապահովում» ծրագրի 11005 միջոցառմանը՝ ՀՀ-ում գիտական որակավորման, գիտական աստիճանի և գիտական

կոչման վկայագրերի հանձնման, միջազգային կապերի զարգացման, ատենախոսությունների թվայնացման և գիտնականների շտեմարանների ստեղծման ու շահագործման գործընթացների իրականացմանը և 76,000.0 հազ. դրամը՝ «1169 ՀՀ պաշտպանության ապահովում» ծրագրին՝ «Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գիտատեխնիկական (ռազմատեխնիկական) ուղեկցում» 11006 միջոցառման ֆինանսավորման նպատակով, իսկ 2022 թվականին՝ 30,014,199.4 հազ. դրամ, որից 24,546,616.7 հազ. դրամն ուղղվել է «1162 Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների» ծրագրի միջոցառումների իրականացմանը, 5,233,923.7 հազ. դրամը՝ «1119» ծրագրի 11001 միջոցառմանը՝ պաշտպանության բնագավառում գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտությունների շրջանակներում կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների իրականացմանը, 109,624.7 հազ. դրամը՝ «1111 Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության» ծրագրի 12003 և 12006 միջոցառումներին՝ ասպիրանտական և դոկտորանտական կրթության մեջ գտնվող անձանց կրթաթոշակների և գիտական կադրերի պատրաստման համար նպաստների տրամադրմանը, 52,826.9 հազ. դրամը՝ «1192 Կրթության որակի ապահովում» ծրագրի 11005 միջոցառմանը՝ ՀՀ-ում գիտական որակավորման, գիտական աստիճանի և գիտական կոչման վկայագրերի հանձնման, միջազգային կապերի զարգացման, ատենախոսությունների թվայնացման և գիտնականների շտեմարանների ստեղծման ու շահագործման գործընթացների իրականացմանը և 71,207.4 հազ. դրամը՝ «1169 ՀՀ պաշտպանության ապահովում» ծրագրին՝ «Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գիտատեխնիկական (ռազմատեխնիկական) ուղեկցում» 11006 միջոցառման ֆինանսավորման նպատակով:

Գիտության ոլորտի 2020-2022 թվականների պետական ֆինանսավորման ծավալների բաշխումն ըստ գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման ձևերի՝ բերված է Աղյուսակ 1-ում:

Պետական բյուջեի 2020-2022 թվականների ֆինանսավորմամբ իրականացվել են բազային՝ 165, 151 և 102, նպատակային-ծրագրային հետազոտությունների՝ 10-ական ծրագրեր, պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների՝ 426, 254 (որոնցից 122-ը՝ անհատական խրախուսման) և 686 գիտական թեմաներ:

Աղյուսակ 1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական ֆինանսավորման 2019-2021 թվականների ծավալների բաշխումն ըստ ֆինանսավորման ձևերի:

Հ/հ	Ֆինանսավորման ձև	2020թ.	2021թ.	2022թ.
1.	Բազային ֆինանսավորում, այդ թվում՝ գիտաշխատողներին գիտական աստիճանի համար տրվող հավելավճարներ (հազ. դրամ)	11,215,448.9	11,220,441.1	17,759,476.7
	Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)	82.15	74.06	72.34
2.	Պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորում (հազ. դրամ)	135,960.0	135,960.0	135,960.0
	Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)	1.00	0.90	0.56
3.	Պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորում (հազ. դրամ)	2,300,329.5	3,792,846.1	6,651,180.0
	Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)	16.85	25.04	27.10
Ընդամենը (հազ. դրամ)		13,651,738.4	15,149,247.2	24,546,616.7

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի 2022-2024 թվականների հիմնական նպատակներն ու վերջնական արդյունքի չափորոշիչները¹.

Նպատակներ են՝

1. Մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացում.
2. Գիտության ոլորտում աշխատողների որակավորման բարձրացում և երիտասարդ կադրերի ներգրավում.
3. Գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացում.
4. Գիտության ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործում:

Վերոնշյալ նպատակների վերջնական արդյունքի չափորոշիչներն են՝

1. Ոլորտային համալիր հետազոտությունների համար անհրաժեշտ սարքավորումներով վերանորոգված և վերազինված գիտական կենտրոնների, գիտական կազմակերպություններում կամ բուհերում առկա առևտրայինացման պոտենցիալ ունեցող մշակումները վերհանող և դրանց առևտրայինացման գործընթացն ուղղորդող կառույցի, գիտությունից բիզնես ռիսկային նախաձեռնությունների գնահատման և ներդրումների ազգային հիմնադրամի, հետազոտությունների համար ավելի նպաստավոր միջավայրի, ինչպես նաև մարդկային և ֆիզիկական ռեսուրսի արդյունավետ օգտագործման պայմանների,

¹ Քաղաքականության նպատակների և թիրախների մասին տեղեկատվությունը կից ներկայացվում է պահանջվող ձևաչափով (Մեթոդաբանության ՄԱԱ 3-ի հավելված 3):

գիտական և գիտատեխնիկական բնագավառում միջպետական կամ միջգերատեսչական պայմանագրերի և համաձայնագրերի, ինչպես նաև Եվրոպական շրջանակային ծրագրերին Հայաստանի մասնակցության խթանման մեխանիզմների առկայություն:

2. Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ու հետդոկտորական հետազոտությունների ծրագրերի իրականացման ուղղված ծրագրերի, ինչպես նաև աշխարհի լավագույն գիտական կենտրոններում վերապատրաստված գիտաշխատողների առկայություն:

3. Հետազոտությունների միջազգային չափանիշների սահմանում, կատարողականի գնահատման մեխանիզմների, հեռավար դեկավարվող լաբորատորիաների, գիտության ոլորտի կառավարման միասնական էլեկտրոնային հարթակի, հասարակական, հայագիտության և հումանիտար գիտությունների բնագավառների, երկակի նշանակության, կիրառական արդյունքի ձեռքբերման, ինչպես նաև գերակա ուղղություններով հետազոտությունների աջակցության ուղղված ծրագրերի առկայություն:

4. Հիմնարար հետազոտությունների ծրագրերի ընտրության մրցակցային մեխանիզմների, տնտեսության պահանջներից բխող հետազոտությունների պատվերների ձևավորման, ինչպես նաև երկակի նշանակություն ունեցող գիտական արդյունքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների իրականացման մեխանիզմների առկայություն:

3. ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Գիտության կոմիտեն գտնում է, որ 2023-2025 թվականների համար առաջնահերթ են.

Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար՝ (ըստ գերակայությունների նվազման)			Հիմնավորումներ
2023թ.	2024թ.	2025թ.	
1.	Մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացում		<p>Գիտական գործունեության արդյունավետության և մրցունակության բարձրացման կարևորագույն գրավականներից է գիտական ենթակառուցվածքների զարգացածությունը, որը հնարավորություն է տալիս իրականացնելու մրցունակ գիտական հետազոտություններ ոչ միայն ժամանակակից գիտական սարքավորումների և նյութերի միջոցով, այլ նաև ընձեռելով գիտական գործունեության համար բարենպաստ ֆիզիկական միջավայր:</p> <p>Նպատակին հասնելու համար համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկի 27-րդ կետի՝</p> <p>➤ 27.1-ին ենթակետի՝ անհրաժեշտ է շարունակել Գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինմանն ու համատեղ օգտագործման գիտական սարքավորումների կենտրոնների ստեղծմանն ուղղված մրցութային ծրագրի իրականացումը, որոնց համար ըստ վերոնշյալ որոշմամբ 2023-2025 թվականներին ՀՀ պետական բյուջեի և ԵՄ դրամաշնորհային միջոցներից նախատեսված է հատկացնել համապատասխանաբար՝ 5160000.0, 6740000.0 և 8320000.0 հազ. դրամ:</p> <p>➤ 27.2-րդ ենթակետի՝ անհրաժեշտ է շարունակել Գիտական կենտրոնների վերանորոգմանն ուղղված մրցութային ծրագրի իրականացումը, որի համար ըստ վերոնշյալ որոշմամբ 2023-2025 թվականներին ՀՀ պետական բյուջեից նախատեսված է հատկացնել 2940000.0-ական հազ. դրամ:</p> <p>➤ 27.3-րդ ենթակետի՝ անհրաժեշտ է իրականացնել նոր մրցութային ծրագրի ուղղված Հետազոտության բնագավառով մոտ փոքր գիտական կազմակերպությունները խոշոր գիտական կենտրոններում միավորմանը, որի համար ըստ վերոնշյալ որոշմամբ 2023-2025 թվականներին ՀՀ պետական բյուջեի և ԵՄ դրամաշնորհային միջոցներից նախատեսված է հատկացնել համապատասխանաբար՝ 5380000.0, 11750000.0 և 17390000.0 հազ. դրամ:</p> <p>➤ 27.4-րդ ենթակետի՝ անհրաժեշտ է ստեղծել Նորարարության և գիտատար ձեռնարկատիրության խթանմանն ու աջակցությանն ուղղված տեխնոլոգիաների փոխանցման կառույց:</p> <p>➤ 27.5-րդ ենթակետի՝ անհրաժեշտ է ստեղծել Գիտությունից բիզնես ռիսկային նախաձեռնությունների գնահատման և ներդրումների ազգային հիմնադրամ, որի համար ըստ վերոնշյալ որոշմամբ 2025 թվականին ՀՀ պետական բյուջեից նախատեսված է հատկացնել 10000000.0 հազ. դրամ:</p> <p>➤ 27.6-րդ ենթակետի՝ անհրաժեշտ է ապահովել Գիտական և գիտատեխնիկական բնագավառում միջպետական կամ միջգերատեսչական պայմանագրերի և համաձայնագրերի կնքումը, որի համար ըստ վերոնշյալ որոշմամբ 2023-2025 թվականներին ՀՀ պետական բյուջեից նախատեսված է հատկացնել համապատասխանաբար 4000000.0, 5000000.0 և 6000000.0 հազ. դրամ:</p> <p>➤ 27.7-րդ ենթակետի՝ անհրաժեշտ է իրականացնել Եվրոպական շրջանակային ծրագրերի հետ ասոցացման և շրջանակային ծրագրերում Հայաստանի ակտիվ մասնակցության խթանմանը միտված ծրագրեր:</p> <p>Մասնավորապես, միջազգային համագործակցության ընդլայնման նպատակով պետք է շարունակել՝</p> <p>➤ համաֆինանսավորման սկզբունքով միջազգային ծրագրերի իրականացումը,</p> <p>➤ անդամակցությունը գիտական կառույցներին/համագործակցություններին՝ Միջուկային Հետազոտությունների Միացյալ Ինստիտուտի (ՄՀՄԻ – JINR), Բարձր</p>

	<p>Էներգիաների Ստերեոսկոպիկ Համակարգի (ԲԷՍԿ - H.E.S.S.):</p> <p>Ներկայումս համաֆինանսավորման սկզբունքով ֆինանսավորվում են միջազգային համագործակցության 72 ծրագիր, հայ-իտալական և հայ-չինական մեկական լաբորատորիա, գործում են ՀՀ ԳԱԱ ԻԿՐԱՆԵՏ կենտրոն միջազգային կազմակերպությունը, Ա. Սալամի անվան տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոնի (ICTP) փոխկապակցված կենտրոնը՝ Երևանի պետական համալսարանի և Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ) Տեսական ֆիզիկայի համատեղ լաբորատորիայի հենքի վրա:</p> <p>Զարգացած պետությունների և դրանց գերատեսչությունների կամ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում իրականացվելու են ինչպես համաշխարհային նշանակության հետազոտություններ, այնպես էլ մի շարք շարժունակության ծրագրեր:</p> <p>2021 թվականի նոյեմբերի 12-ին Բյուսելում ՀՀ և Եվրոպական միության միջև ստորագրվել է Միության «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագիրը, որը վավերացվել է ՀՀ ԱԺ կողմից 2022 թվականի փետրվարի 9-ին: Ծրագրի նպատակն է մասնակից երկրների գիտական համայնքներին հասանելի դարձնել ԵՄ առաջատար գիտական ենթակառուցվածքները և խթանել ընդլայնված մասնակցությունը ժամանակակից առաջադեմ հետազոտական և նորարարական նախագծերին: «Հորիզոն Եվրոպա» ծրագրին մասնակցությունը կապահովի Հայաստանի Հանրապետության գիտական համակարգի Եվրոպական հետազոտական տարածքին ինտեգրվելու գործընթացի շարունակականությունը:</p> <p>2021 թվականից ՀՀ գիտության կոմիտեի կողմից ներդրվել է Գիտական, գիտատեխնիկական և գիտատեխնոլոգիական ծրագրերի իրականացման կենտրոնի ստեղծման ծրագիրը, որի շրջանակներում իր գործունեությունն է վերսկսել «Գիտական և նորարարական գործընկերությանն աջակցման կենտրոն» / նախկինում՝ «Գիտական ծրագրերի ինտեգրմանն աջակցության կենտրոն»/ հիմնադրամը, որի նպատակն է իրականացնել գիտության, տեխնոլոգիաների և նորարարությունների ոլորտներում միջազգային կառույցների, այդ թվում «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարությունների Եվրոպական Միության շրջանակային նոր ծրագրի կողմից ֆինանսավորվող դրամաշնորհային ծրագրերում ՀՀ գիտական կազմակերպությունների, բուհերի և առանձին գիտնականների ու գիտական խմբերի մասնակցության ակտիվացմանն ուղղված միջոցառումներ՝ տրամադրելով համապատասխան խորհրդատվություն և տեխնիկական աջակցություն:</p> <p>2021 թվականի հոկտեմբերին Կենտրոնը հայտարարել է մրցույթ ԵՄ շրջանակային ծրագրի հայաստանյան հնարավոր մասնակիցների նախագծերի և հայտադիմումների նախապատրաստմանն աջակցություն տրամադրելու նպատակով: Մրցույթի արդյունքում ընտրված 9 հայտատուների համար այժմ անցկացվում են խորհրդատվություններ՝ «Հորիզոն Եվրոպա» ծրագրի շրջանակներում հայտարարված մրցույթների նպատակների և դրանց մասնակցության պայմանների մասին: Շահառուներին կտրամադրվի օժանդակություն հայտադիմումների լրացման ընթացքում: Ծրագրին իրականացվում է գերմանական GIZ ընկերության և CIVITTA խորհրդատվական ընկերության հայաստանյան գրասենյակի աջակցությամբ:</p>
<p>2 Գիտության ոլորտում աշխատողների որակավորման բարձրացում և երիտասարդ կադրերի ներգրավում</p>	<p>Գիտության ոլորտում աշխատողների որակավորման բարձրացումը, երիտասարդ կադրերի ներգրավումը և գիտնականների աշխատավարձի և գիտության ֆինանսավորման բարձրացումը ոլորտի ծերացման հիմնահարցի լուծման և մրցունակության բարձրացման հիմնական գործիքներն են:</p> <p>ՀՀ գիտության ոլորտի առաջընթաց զարգացման համար սկզբունքային նշանակություն ունի գիտական կադրերի արդյունավետ վերարտադրության և սահուն սերնդափոխության ապահովման հարցը:</p> <p>Նպատակի ձեռքբերման համար իրականացվող քայլերը պետք է մի կողմից միտված լինեն գիտության ոլորտ երիտասարդ կադրերով համալրելուն, մյուս կողմից՝ միջին սերնդի գիտնականների թվաքանակի բարձրացմանը:</p> <p>Նպատակին հասնելու համար համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող</p>

	<p>միջոցառումների ցանկի 28-րդ կետի՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ 28.1-ին ենթակետի՝ անհրաժեշտ է շարունակել Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցությանն ուղղված մրցութային ծրագրի իրականացումը, որի համար ըստ վերոնշյալ որոշմամբ 2023-2025 թվականներին ՀՀ պետական բյուջեից նախատեսված է հատկացնել համապատասխանաբար՝ 250000.0, 350000.0 և 1550000.0 հազ. դրամ: ➤ 28.2-րդ ենթակետի՝ անհրաժեշտ է շարունակել Հետդոկտորական հետազոտություններին ուղղված մրցութային ծրագրի իրականացումը, որի համար ըստ վերոնշյալ որոշմամբ 2023-2025 թվականներին ՀՀ պետական բյուջեից նախատեսված է հատկացնել համապատասխանաբար՝ 403200.0, 537600.0 և 582400.0 հազ. դրամ: ➤ 28.3-րդ ենթակետի՝ անհրաժեշտ է իրականացնել Արտերկրի լավագույն գիտական կենտրոններում գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման միջին և երկարաժամկետ ծրագրերին ուղղված նոր մրցութային ծրագիր, որի համար ըստ վերոնշյալ որոշմամբ 2023-2025 թվականներին ՀՀ պետական բյուջեից նախատեսված է հատկացնել համապատասխանաբար՝ 560000.0, 840000.0 և 1400000.0 հազ. դրամ: <p>Պետք է շարունակել իրականացնել նաև՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տարեկան) հետազոտությունների աջակցության երկամյա դրամաշնորհային մրցույթի կազմակերպում, ➤ գիտական խմբերի մեկնարկային և գիտական խմբերի կամ լաբորատորիաների ամրապնդմանն ուղղված եռամյա դրամաշնորհային մրցույթների կազմակերպում, ➤ առաջատար հետազոտությունների աջակցության ծրագիր, երբ դրամաշնորհը հատկացվում է գիտական նշանակալի նվաճումներ ունեցող գիտաշխատողին՝ հետազոտական խումբ ձևավորելու և հավակնոտ թեմայով հետազոտական ծրագրեր իրականացնելու համար, ➤ գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների շրջանակներում կին ղեկավարների առաջխաղացմանն ուղղված եռամյա դրամաշնորհային մրցույթների իրականացում:
<p>3 Գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացում</p>	<p>Գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացումն իրականացվելու է հետազոտությունների միջազգային չափանիշների սահմանմամբ և կատարողականի գնահատման մեխանիզմների ներդրմամբ:</p> <p>Նպատակին հասնելու համար համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկի 29-րդ կետի՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ 29.1-ին ենթակետի՝ անհրաժեշտ է շարունակել գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի աշխատավարձերի նորմավորման գործընթացի իրականացումը, որի համար ըստ վերոնշյալ որոշմամբ 2023-2025 թվականներին ՀՀ պետական բյուջեից նախատեսված է յուրաքանչյուր տարի նախորդ տարվա նկատմամբ աշխատավարձի ֆոնդին ավելացնել՝ 2271686.4, 2439240.0 և 2010078.0 հազ. դրամ: ➤ 29.2-րդ ենթակետի՝ անհրաժեշտ է մշակել և ներդնել գիտական կադրերի համապետական ատեստավորման ծրագիրը, որը հիմք է հանդիսանալու արդյունավետության պահանջներին համապատասխանող գիտական աշխատողների տարակարգման և ըստ գիտական աշխատողների պաշտոնների անվանացանկի գիտական կազմակերպություններին հատկացվող ֆինանսական վերանայման համար: ➤ 29.3-րդ ենթակետի՝ անհրաժեշտ է ներդնել գիտական կազմակերպությունների բազային ֆինանսավորման մինչև 5 տարվա ծրագրային ֆինանսավորման մոդել: ➤ 29.4-րդ ենթակետի՝ անհրաժեշտ է շարունակել վերաինտեգրման կամ հեռավար ղեկավարվող լաբորատորիաների ստեղծմանն ուղղված ծրագրի իրականացումը, որի համար ըստ վերոնշյալ որոշմամբ 2023-2025 թվականներին ՀՀ

պետական բյուջեից նախատեսված է հատկացնել համապատասխանաբար՝ 692000.0, 938000.0 և 1184000.0 հազ. դրամ:

➤ **29.5-րդ ենթակետի՝** անհրաժեշտ է ներդնել գիտության ոլորտի կառավարման միասնական էլեկտրոնային հարթակ, որի համար ըստ վերոնշյալ որոշմամբ 2023 թվականին ՀՀ պետական բյուջեից նախատեսված է հատկացնել 5000.0 հազ. դրամ:

➤ **29.6-րդ ենթակետի՝** անհրաժեշտ է իրականացնել հասարակական, հայագիտության և հումանիտար գիտությունների բնագավառների հետազոտությունների աջակցությանն ուղղված նոր մրցութային ծրագրեր, որոնց համար ըստ վերոնշյալ որոշմամբ 2023 թվականին ՀՀ պետական բյուջեից նախատեսված է հատկացնել 2500000.0 հազ. դրամ:

➤ **29.7-րդ ենթակետի՝** անհրաժեշտ է շարունակել երկակի նշանակության հետազոտությունների աջակցությանն ուղղված ծրագրի իրականացումը, որի համար ըստ վերոնշյալ որոշմամբ 2023 թվականին ՀՀ պետական բյուջեից նախատեսված է հատկացնել 200000.0 հազ. դրամ:

➤ **29.8-րդ ենթակետի՝** անհրաժեշտ է շարունակել կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական նախագծերի աջակցություն ուղղված ծրագրի իրականացումը, որի համար ըստ վերոնշյալ որոշմամբ 2023 թվականին ՀՀ պետական բյուջեից նախատեսված է հատկացնել 120000.0 հազ. դրամ:

➤ **29.9-րդ ենթակետի՝** անհրաժեշտ է իրականացնել գերակա ուղղություններով հետազոտությունների աջակցությանն ուղղված նոր մրցութային ծրագրեր, որոնց համար ըստ վերոնշյալ որոշմամբ 2024 թվականին ՀՀ պետական բյուջեից նախատեսված է հատկացնել 540000.0 հազ. դրամ:

Միաժամանակ պետք է շարունակել արհեստական բանականություն և տվյալազիտություն, քվանտային տեխնոլոգիաներ, ռոբոտատեխնիկա մասնագիտություններով հետազոտությունների աջակցությունը:

4. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

4.1. Պարտադիր և հայեցողական ծախսեր

Դասիչ		Միջոցառման անվանումը	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը	Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակը	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը
Ծրագիր	Միջոցառում				
Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
1162	11001	Գիտության բնագավառի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծառայություններ	Գիտության բնագավառի պետական քաղաքականության իրականացում, մոնիտորինգի և գիտության ծառայությունների ու ծրագրերի համակարգման ծառայություններ	Գիտության կոմիտե	«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենք
	11002	Գիտական ենթակառուցվածքի արդիականացում	Գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների զարգացում, ծրագրերի իրականացում, գիտական սարքավորումների արդիականացում, միջազգային համագործակցության աջակցություն	Գիտական պետական կազմակերպություններ, պետական բուհեր և հետբուհական կրթական հաստատություններ	«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենք
	11004	Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն	Հին ձեռագրերի ինստիտուտի, ցեղասպանության թանգարանի, Բյուրարկանի աստղադիտարանի, Հայկենսատեխնոլոգիայի կենսաբանական թանգարանի, ԵՊՀ գրադարանի պահպանում	Գիտական պետական կազմակերպություններ, պետական բուհեր և հետբուհական կրթական հաստատություններ	«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենք
	11005	Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ	Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ	Գիտական կազմակերպությունների և բուհերի մրցութային կարգով ընտրված հետազոտական խմբեր	«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենք
	11006	Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ	Գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային հետազոտություններ	Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին օրենքի համաձայն ընտրված կազմակերպություններ	«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենք
	11007	Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակում	Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակում	Մրցույթով ընտրված կազմակերպություն	«Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենք
	11008	Բարձր էներգիաների ֆիզիկայի բնագավառի ենթակառուցվածքների արդիականացում	Ֆիզիկայի բնագավառում գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացում	«Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ	ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 1-ի «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» ՊՈԱԿ-Ը «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)»

				հիմնադրամի վերակազմավորելու մասին» N 1301-Ն որոշում
11009	Արագացուցչային տեխնոլոգիաների զարգացում	Արագացուցչային ֆիզիկայի և տեխնիկայի բնագավառում գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացում	«ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամ	ՀՀ կառավարության 2012 թվականի մայիսի 24-ի «Քեոյլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամ հիմնադրելու մասին» N 675-Ն որոշում
11010	Անտենային էտալոնների պահպանում և զարգացում	ՀՀ ազգային անտենային էտալոնների պահպանում և զարգացում	«Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ	«Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենք հոդված 26
11012	Գիտական գրադարանային ծառայություններ (գիտության ոլորտ)	Գրադարանային հավաքածուների պահպանում և համալրում, ընթերցողների սպասարկում, գրադարանային միջոցառումների կազմակերպում	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	«Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենք
11013	Գիտատեխնիկական գրադարանային ծառայություններ (տնտեսության ոլորտ)	Գրադարանային հավաքածուների պահպանում և համալրում, ընթերցողների սպասարկում, գրադարանային միջոցառումների կազմակերպում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	«Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենք
11017	ԵՄ աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրի շրջանակներում գիտության ոլորտում համատեղ օգտագործման և/կամ գերազանցության կենտրոնների ստեղծում	ԵՄ աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրի շրջանակներում գիտության ոլորտում համատեղ օգտագործման և/կամ գերազանցության կենտրոնների ստեղծում	Գիտության կոմիտե	ԵՄ աջակցություն
12001	Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ	Պետական գիտական ծրագրերում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողներին հավելավճարների տրամադրում	Պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողներ	«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենք
12002	ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամների պատվովճարներ	ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամների պատվովճարների տրամադրում	ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամներ	«Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենք
31001	Գիտության կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավում	Համակարգչային տեխնիկայի, գրասենյակային գույքի և տրանսպորտային միջոցների ձեռքբերում	Գիտության կոմիտեի	«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենք
Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝				
Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝				
1162	32001	Ներդրումներ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ինստիտուտներում	ՀՀ ԳԱԱ համակարգի կազմակերպությունները սարքավորումներով վերազինում	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա ինստիտուտներ
				«Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենք

4.2. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

Գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառին պետական բյուջեով հատկացված ծախսերը (առանց պետական կառավարման մարմնի պահպանման ծախսերի) 2020 թվականին՝ 17,718,432.5 հազ. դրամ, որից 13,651,738.4 հազ. դրամն ուղղվել է «1162 Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների» ծրագրի միջոցառումների իրականացմանը, 3,854,972.4 հազ. դրամը՝ «1119» ծրագրին՝ պաշտպանության բնագավառում գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտությունների իրականացմանը, 82,894.8 հազ. դրամը՝ «1111 Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության» ծրագրի 12003 և 12006 միջոցառումներին՝ ասպիրանտական և դոկտորանտական կրթության մեջ գտնվող անձանց կրթաթոշակների և գիտական կադրերի պատրաստման համար նպաստների տրամադրմանը, 52,826.9 հազ. դրամը՝ «1192 Կրթության որակի ապահովում» ծրագրի 11005 միջոցառմանը՝ ՀՀ-ում գիտական որակավորման, գիտական աստիճանի և գիտական կոչման վկայագրերի հանձնման, միջազգային կապերի զարգացման, ատենախոսությունների թվայնացման և գիտնականների շտեմարանների ստեղծման ու շահագործման գործընթացների իրականացմանը և 76,000.0 հազ. դրամը՝ «1169 ՀՀ պաշտպանության ապահովում» ծրագրին՝ «Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գիտատեխնիկական (ռազմատեխնիկական) ուղեկցում» 11006 միջոցառման ֆինանսավորման նպատակով, իսկ 2021 թվականին՝ 19,947,242.1 հազ. դրամ, որից 15,149,247.2 հազ. դրամն ուղղվել է «1162 Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների» ծրագրի միջոցառումների իրականացմանը, 4,574,223.3 հազ. դրամը՝ «1119» ծրագրի 11001 միջոցառմանը՝ պաշտպանության բնագավառում գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտությունների շրջանակներում կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների իրականացմանը, 94,944.7 հազ. դրամը՝ «1111 Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության» ծրագրի 12003 և 12006 միջոցառումներին՝ ասպիրանտական և դոկտորանտական կրթության մեջ գտնվող անձանց կրթաթոշակների և գիտական կադրերի պատրաստման համար նպաստների տրամադրմանը, 52,826.9 հազ. դրամը՝ «1192 Կրթության որակի ապահովում» ծրագրի 11005 միջոցառմանը՝ ՀՀ-ում գիտական որակավորման, գիտական աստիճանի և գիտական կոչման վկայագրերի հանձնման, միջազգային կապերի զարգացման,

ատենախոսությունների թվայնացման և գիտնականների շտեմարանների ստեղծման ու շահագործման գործընթացների իրականացմանը և 76,000.0 հազ. դրամը՝ «1169 ՀՀ պաշտպանության ապահովում» ծրագրին՝ «Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գիտատեխնիկական (ռազմատեխնիկական) ուղեկցում» 11006 միջոցառման ֆինանսավորման նպատակով, իսկ 2022 թվականին՝ 30,014,199.4 հազ. դրամ, որից 24,546,616.7 հազ. դրամն ուղղվել է «1162 Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների» ծրագրի միջոցառումների իրականացմանը, 5,233,923.7 հազ. դրամը՝ «1119» ծրագրի 11001 միջոցառմանը՝ պաշտպանության բնագավառում գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտությունների շրջանակներում կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների իրականացմանը, 109,624.7 հազ. դրամը՝ «1111 Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության» ծրագրի 12003 և 12006 միջոցառումներին՝ ասպիրանտական և դոկտորանտական կրթության մեջ գտնվող անձանց կրթաթոշակների և գիտական կադրերի պատրաստման համար նպաստների տրամադրմանը, 52,826.9 հազ. դրամը՝ «1192 Կրթության որակի ապահովում» ծրագրի 11005 միջոցառմանը՝ ՀՀ-ում գիտական որակավորման, գիտական աստիճանի և գիտական կոչման վկայագրերի հանձնման, միջազգային կապերի զարգացման, ատենախոսությունների թվայնացման և գիտնականների շտեմարանների ստեղծման ու շահագործման գործընթացների իրականացմանը և 71,207.4 հազ. դրամը՝ «1169 ՀՀ պաշտպանության ապահովում» ծրագրին՝ «Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գիտատեխնիկական (ռազմատեխնիկական) ուղեկցում» 11006 միջոցառման ֆինանսավորման նպատակով:

ՀՀ ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «Գիտության ոլորտին» վերաբերող բաժնով առաջարկվող դրույթները և ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը ենթադրում են պետական բյուջեից և տնտեսության մասնավոր հատվածից գիտության ոլորտին հատկացվող ֆինանսական ծավալների ավելացում: Այդպիսի մոտեցումը պայմանավորված է ինչպես ժամանակակից տնտեսության և հասարակության զարգացման գործում գիտության առանցքային դերով, այնպես էլ հանրապետությունում գիտելիքահենք տնտեսություն ստեղծելու համար անհրաժեշտ բարձր

մասնագիտական որակավորում ունեցող կադրերի պատրաստման հրամայականով: Գիտության ոլորտի ֆինանսավորման ավելացումը զգալիորեն կմեծացնի նաև գիտական արդյունքի առևտրայնացմանն ուղղված հետազոտությունների մասնաբաժինը, կնպաստի դրանց ներդրմանը տնտեսության մեջ, հնարավորություն կտա զարգացնելու ինովացիոն տեխնոլոգիաների վրա հիմնված փոքր ու միջին ձեռնարկատիրությունը, կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը:

2023-2025 թվականներին շարունակվելու են պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, պետական նպատակային-ծրագրային և պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորումները: Գիտական ծրագրերի և թեմաների ֆինանսավորումն իրականացվելու է բացառապես ծրագրային (մրցութային) սկզբունքով:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորումը հատկացվելու է միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի կողմից ընտրված՝ հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների, գիտական կազմակերպությունների ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման, գիտական կադրերի պատրաստման, գիտական և գիտատեխնիկական գործունեության ապահովման, ինչպես նաև համատեղ օգտագործման գիտական սարքավորումների ձեռքբերման և միջազգային համագործակցության ծրագրերի իրականացման նպատակով: Համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 747-Լ որոշման՝ 2022-2025 թվականներին բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի աշխատավարձը աստիճանական կավելանա՝ հասնելով հանրապետության մասշտաբով պետական համակարգում համեմատելի և համադրելի արժեքների: Նշված գործընթացը կնպաստի գիտության ոլորտը երիտասարդ կադրերով համալրելու խնդրի լուծմանը, գիտական կադրերի սոցիալ-տնտեսական և աշխատանքային պայմանների բարելավմանը, գիտության և տեխնիկայի բնագավառի բարձր որակավորում ունեցող կադրերի թվաքանակի կայուն աճին և գիտական ներուժի արդյունավետ նպատակային վերարտադրության ապահովմանը:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային ֆինանսավորումը հատկացվելու է գերատեսչությունների կողմից մշակված, այդ թվում՝ երկակի նշանակության հիմնախնդիրների լուծման նպատակով: Կատարման ենթակա հիմնախնդիրների ցանկն ընտրվելու է միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի կողմից, հաստատվելու է ՀՀ կառավարության կողմից, իսկ դրանց լուծմանն ուղղված ծրագրերի ընտրությունն իրականացվելու է մրցութային կարգով՝ ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորումը հատկացվելու է որպես դրամաշնորհ՝ գիտական անկախ փորձաքննության արդյունքների հիման վրա, մրցութային կարգով ընտրված հետազոտական նախագծերի իրականացման և գիտահետազոտական լաբորատորիաների աջակցության, միջազգային ճանաչում ունեցող գիտնականների նախաձեռնությունների խրախուսման նպատակով: Մասնավորապես, շարունակվում են Արցախի Հանրապետության հետ համագործակցության, երկակի նշանակության հետազոտությունների աջակցության, կիրառական արդյունքի ձեռքբերման, կին դեկավարների առաջխաղացման, երիտասարդ գիտնականների վերապատրաստման (PostDoc), նպատակային ասպիրանտական ուսուցման (PhD), գիտական խմբերի մեկնարկի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդման, առաջատար հետազոտությունների աջակցության, երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տարեկան) հետազոտությունների գիտական աջակցության, «Արիեստական բանականություն և տվյալագիտություն», «Քվանտային տեխնոլոգիաներ», «Ռոբոտատեխնիկա» մասնագիտություններով հետազոտություններին, ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների, «Հասարակական գիտություններ», «Հայագիտություն և հումանիտար գիտություններ» բնագավառների հետազոտությունների և վերահստեգրման դրամաշնորհների աջակցությանն ուղղված ծրագրերը:

4.3. Նոր նախաձեռնությունները

5. Ոչ բյուջետային աղբյուրներից ստացվող եկամուտները

6.Տարածքային զարգացմանն առնչվող ծրագրերը/միջոցառումները

7.Միջոլորտային (խաչվող) բնույթի առանձին քաղաքականություններին առնչվող ծրագրերը/միջոցառումները

8. Արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջեի խողովակներով ստացվող վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծրագրերը/միջոցառումները

Աղյուսակ 1. Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների 1162 ծրագրի և միջոցառումների գծով ամփոփ ֆինանսական պահանջներ 2023-2025թթ. համար

Ծրագրային դասիչ		Ծրագիր/Միջոցառման անվանումը	Գոյություն ունեցող պարտավորությունների գծով հաշվարկված (ճշգրտված) ծախսերը ³⁴ (հազ. դրամ)			Ծախսային խնայողության գծով ամփոփ առաջարկը ³⁵ (հազ. դրամ) (-)			Նոր նախաձեռնություններ (հազ.դրամ) (+)			Միջոցառման գծով ամփոփ ծախսեր (հազ. դրամ)		
Ծրագիր	Միջոցառում		2023թ.	2024թ.	2025թ.	2023թ	2024թ	2025թ	2023թ.	2024թ.	2025թ.	2023թ.	2024թ.	2025թ.
Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ														
1162		Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր	35,657,409.6	42,892,964.3	61,504,004.0	—	—	—	—	—	—	35,657,409.6	42,892,964.3	61,504,004.0
	11001	Գիտության բնագավառի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծառայություններ	211,487.2	215,321.45	218,272.19	—	—	—	—	—	—	211,487.2	215,321.45	218,272.19
	11002	Գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների զարգացում, ծրագրերի իրականացում, գիտական սարքավորումների արդիականացում, միջազգային համագործակցության աջակցություն	22,871,631.7	27,609,949.2	41,830,112.4	—	—	—	—	—	—	22,871,631.7	27,609,949.2	41,830,112.4

11004	Հին ձեռագրերի ինստիտուտի, ցեղասպանության թանգարանի, Բյուրականի աստղադիտարան ի, Հայկենսատեխնոլ ոգիայի կենսաբանական թանգարանի, ԵՊՀ գրադարանի պահպանում	1,171,406.8	1,171,406.8	1,171,406.8	—	—	—	—	—	—	1,171,406.8	1,171,406.8	1,171,406.8
11005	Գիտական և գիտատեխնիկակ ան գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունն եր	8,403,357.3	10,770,600.2	15,022,566.0	—	—	—	—	—	—	8,403,357.3	10,770,600.2	15,022,566.0
11006	Գիտական և գիտատեխնիկակ ան նպատակային- ծրագրային հետազոտությունն եր	407,880.0	543,840.0	679,800.0	—	—	—	—	—	—	407,880.0	543,840.0	679,800.0
11007	Գիտական ամսագրերի և մենագրություննե րի հրատարակում	95,433.9	95,433.9	95,433.9	—	—	—	—	—	—	95,433.9	95,433.9	95,433.9
11008	Բարձր էներգիաների ֆիզիկայի բնագավառի ենթակառուցվածք ների արդիականացում	781,846.8	781,846.8	781,846.8	—	—	—	—	—	—	781,846.8	781,846.8	781,846.8
11009	Արագացուցչային տեխնոլոգիաների զարգացում	220,383.4	220,383.4	220,383.4	—	—	—	—	—	—	220,383.4	220,383.4	220,383.4
11010	Ազգային անտենային էտալոնների պահպանություն	45,000.0	45,000.0	45,000.0	—	—	—	—	—	—	45,000.0	45,000.0	45,000.0

11012	Գիտական գրադարանային ծառայություններ	149,826.3	149,826.3	149,826.3	—	—	—	—	—	—	149,826.3	149,826.3	149,826.3
11013	Գիտատեխնիկական գրադարանային ծառայություններ	165,156.2	165,156.2	165,156.2	—	—	—	—	—	—	165,156.2	165,156.2	165,156.2
11017	ԵՄ աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրի շրջանակներում գիտության ոլորտում համատեղ օգտագործման և/կամ գերազանցության կենտրոնների ստեղծում	0	0	0	—	—	—	—	—	—	0	0	0
12001	Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ	842,000.0	842,000.0	842,000.0	—	—	—	—	—	—	842,000.0	842,000.0	842,000.0
12002	ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամների պատվովճարներ	139,200.0	139,200.0	139,200.0	—	—	—	—	—	—	139,200.0	139,200.0	139,200.0
Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ (շարունակական բնույթի)													
31001	Գիտության կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավում	9,800.0	0.0	0.0	—	—	—	—	—	—	9,800.0	0.0	0.0
32001	Ներդրումներ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ինստիտուտներում	143,000.0	143,000.0	143,000.0	—	—	—	—	—	—	143,000.0	143,000.0	143,000.0

Աղյուսակ 2. Գիտության ոլորտի գծով 2023-2025 թթ. ընդհանուր ծախսերի համեմատությունը ՀՀ 2022թ. պետական բյուջեի և 2023-2025թթ. համար սահմանված կողմնորոշիչ չափաքանակների հետ

	2022թ.	2023թ.	2024թ.	2025թ.
1. Գիտության ոլորտի գծով 2023-2025 թվականների համար սահմանված ֆինանսավորման ընդհանուր կողմնորոշիչ չափաքանակները	X			
2. «ՀՀ 2021թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով գիտության ոլորտի համար սահմանված ընդհանուր հատկացումները	24,546,616.7	X	X	X
3. Ընդամենը հայտով ներկայացված ընդհանուր ծախսերը՝ 2023-2025 թվականների ՄԺԾՄ համար	X	35,025,706.0	42,267,226.4	60,875,315.4
3.1 Գիտության ոլորտի գծով գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների գնահատում 2023-2025 թվականների ՄԺԾՄ համար (առանց ծախսային խնայողությունների վերաբերյալ առաջարկների ներառման)	X	24,546,616.7	24,546,616.7	24,546,616.7
3.2 Ծախսային խնայողությունների գծով առաջարկները (-) նշանով	X	-	-	-
3.3 Նոր նախաձեռնությունների գծով ընդհանուր ծախսերը	X	-	-	-
4. Տարբերությունը ՀՀ 2021թ. պետական բյուջեի համապատասխան ցուցանիշից (տող 3-տող 2)	X	10,479,089.3	7,241,520.4	18,608,089.0
5. Տարբերությունը 2023-2025 թվականների համար սահմանված ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակներից (տող 3-տող 1)	X	X	X	X

9. ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Հայտի հետ կապված ռիսկերը

N	Ռիսկի նկարագրությունը	Երևույթի հանդես գալու հավանականությունը ²	Հնարավոր ազդեցությունը նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա	Ռիսկի կանխման/հաղթահարման հնարավոր ուղիները
1.	Կազմակերպությունների գիտական ծրագրերի ամբողջական իրականացումն անհնարին դարձնող ընթացիկ արդյունքների ստացումը կամ նոր հանգամանքների ի հայտ գալը	5	Արդեն իսկ հայտնի գիտական և (կամ) գիտատեխնիկական արդյունքների ձեռքբերում կամ ծրագրերով նախատեսված գիտական և (կամ) գիտատեխնիկական արդյունքների ձեռքբերման անհնարինություն	Գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի մոնիթորինգ և դրա հիման վրա վերջնական արդյունքների ճշգրտում
2.	Նպատակային-ծրագրային հետազոտությունների ամբողջական իրականացումն անհնարին դարձնող ընթացիկ արդյունքների ստացումը կամ այլ հանգամանքների ի հայտ գալը	5	Արդեն իսկ հայտնի գիտական և (կամ) գիտատեխնիկական արդյունքների ձեռքբերում կամ ծրագրերով նախատեսված գիտական և (կամ) գիտատեխնիկական արդյունքների ձեռքբերման անհնարինություն	Ծրագրերի մոնիթորինգ, ընթացիկ (տարեկան) հաշվետվությունների փորձաքննության արդյունքում հետագա ֆինանսավորմանը չբաժնակցող ծրագրերի իրականացման համար նախատեսված միջոցների սահմաններում նոր ծրագրերի ֆինանսավորում
3.	Պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների ամբողջական կատարումը և հայտով նախատեսված արդյունքների ձեռքբերումն անհնարին դարձնող ընթացիկ արդյունքների ստացումը	5	Արդեն իսկ հայտնի գիտական և (կամ) գիտատեխնիկական արդյունքների ձեռքբերում	Ընթացիկ (տարեկան) հաշվետվությունների փորձաքննության արդյունքում հետագա ֆինանսավորմանը չբաժնակցող ծրագրերի իրականացման համար նախատեսված միջոցների սահմաններում նոր մրցույթի կազմակերպում
4.	Կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված թեմաներով նախատեսված արդյունքների ստացումը	2	Թեմայով նախատեսված գիտական և (կամ) գիտատեխնիկական արդյունքների ձեռքբերման անհնարինություն	Ընթացիկ հաշվետվությունների փորձաքննության արդյունքում հետագա ֆինանսավորմանը չբաժնակցող ծրագրերի իրականացման համար նախատեսված միջոցների սահմաններում նոր մրցույթի կազմակերպում
5.	Գիտական աստիճանների համար	5	Գիտական պետական ծրագրերում և	Գիտական պետական ծրագրերում և

² Ներկայացված է 1-5 թվանշաններով, որտեղ 1 թվանշանը ենթադրում է առավել բարձր հավանականություն:

<p>տրվող հավելավճարների հատկացումների անհամապատասխանությունը պետական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողների թվաքանակին</p>		<p>թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցողների գիտաշխատողների թվաքանակի փոփոխություն</p>	<p>թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցողների մասին տեղեկատվության հավաքագրում՝ եռամսյակային պարբերականությամբ և համապատասխան բյուջետային հատկացումների փոփոխություն՝ ամենամյա պարբերականությամբ</p>
--	--	---	--

ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

ՀՀ գիտության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակներն են գիտության կայուն զարգացման ապահովումը, գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացումը և կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման մեխանիզմների ներդրումը, միջազգայնորեն մրցունակ հիմնարար ուսումնասիրությունների, տնտեսության պահանջներից բխող կիրառական հետազոտությունների, ինչպես նաև երկակի նշանակություն ունեցող գիտելիքների ձեռքբերմանն ուղղված գիտահետազոտական աշխատանքների խթանումը, գիտական կադրերի վերարտադրության արդյունավետ համակարգի ներդրումը, գիտության ենթակառուցվածքների արդիականացումը, կրթություն-գիտություն կապի ամրապնդումը, գիտական արդյունքի առևտրայնացումը, միջազգային գիտական համագործակցության զարգացումը, մտավոր սեփականության արդյունավետ պաշտպանությունը, գիտության ֆինանսավորման բյուջետային և արտաբյուջետային միջոցների ավելացումը:

Այդ նպատակների ձեռքբերմանն ուղղությամբ 2023-2025 թվականների ընթացքում իրականացվելու են միջոցառումներ, որոնք ամրագրված են ՀՀ ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «Գիտության ոլորտին» վերաբերող բաժնով առաջարկվող դրույթները և ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրում:

2023-2025 թվականներին շարունակվելու են՝

ՀՀ-ում միջազգայնորեն մրցունակ, Եվրոպական հետազոտական տարածքի հետ ինտեգրված և այդ հետազոտական տարածքում իր մասնագիտացման տիրույթը (խելացի մասնագիտացում) ունեցող, գիտական գերազանցությունը խթանող, հանրապետության տնտեսության պահանջներից բխող, պաշտպանունակականության մակարդակի բարձրացմանը նպաստող և բարձր տեխնոլոգիական արտադրանք ապահովող ազգային գիտական համակարգ ձևավորելու նպատակով՝

- «ԻԿՐԱՆԵՏ կենտրոն» միջազգային կազմակերպության, Աբդուս Սալամի անվան տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոնի (ICTP) փոխկապակցված կենտրոնի, Երևանի պետական համալսարանի գենետիկայի և բջջաբանության ամբիոնի ու Յենայի համալսարանի մարդու գենետիկայի ինստիտուտի հիման վրա ստեղծված հայ-գերմանական

համատեղ գիտահետազոտական լաբորատորիայի, ինչպես նաև 2020 թվականին մեկնարկած Գիտության կոմիտեի և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության երկրաշարժերի վարչության միջև «Երկրաշարժերի հետազոտության ոլորտում համագործակցության մասին» հուշագրի շրջանակներում հիմնադրված հայ-չինական համատեղ առաջին լաբորատորիայի ֆինանսավորումը,

- համաֆինանսավորման սկզբունքով իրականացվելու են հայ-ֆրանսիական, հայ-բելառուսական, հայ-ռուսական, հայ-գերմանական, հայ-իտալական, հայ-եվրասիական համատեղ ծրագրեր: Միաժամանակ, ֆինանսավորվելու են մի շարք միջազգային գիտական կառույցների կամ համագործակցությունների մասնակցությունը՝ Միջուկային Հետազոտությունների Միացյալ Ինստիտուտի (ՄՀՄԻ–JINR), Բարձր Էներգիաների Ստերեոսկոպիկ Համակարգ (ԲԷՍՀ–H.E.S.S.), «Հորիզոն Եվրոպա» ծրագրի անդամակցությունը և այլն:

Գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ամրապնդման, ինչպես նաև գիտության ոլորտի ենթակառուցվածքների արդիականացման նպատակով՝

- Երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տարեկան) հետազոտությունների աջակցության երկամյա ծրագիրը:

- Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության անհատական խրախուսման ամենամյա ծրագիրը:

- Գիտական խմբերի մեկնարկային աջակցության եռամյա ծրագիրը:

- Գիտական խմբերի ամրապնդմանն ուղղված եռամյա ծրագիրը:

- Առաջատար հետազոտությունների աջակցության հնգամյա ծրագիրը:

- «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրին» պետական աջակցությունը:

- Գիտական սարքերի և սարքավորումների/լաբորատորիաների ձեռքբերման կամ ստեղծման ամենամյա դրամաշնորհային ծրագրերը:

Երկրի տնտեսության պահանջներից բխող, ինչպես նաև երկակի նշանակության բարձր տեխնոլոգիական մրցունակ արտադրանքի ստեղծմանն ուղղված հետազոտությունների խթանման նպատակով՝

- Կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված երկամյա ծրագրեր՝ արտաբյուջետային միջոցների պարտադիր ներգրավման պայմանով՝ համաֆինանսավորման սկզբունքով:

- Արհեստական բանականություն և տվյալագիտություն, քվանտային տեխնոլոգիաներ, ռոբոտատեխնիկա մասնագիտություններով հետազոտությունների աջակցության ծրագիրը:

- Երկակի նշանակության հետազոտությունների աջակցության ծրագիրը:

Միժամանակ, համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 747-Լ որոշման՝ 2022 թվականի հունվարի 1-ից առավելագույնը մեկ տարի առաջ գիտական կադրերի որակավորում անցած գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի աշխատավարձը աստիճանական կավելանա՝ 2025 թվականին հասցնելով հետևյալ ցուցանիշների՝ լաբորանտ կամ ճարտարագետ՝ 138.3 հազ. դրամ, ավագ լաբորանտ կամ ավագ ճարտարագետ՝ 179.0 հազ. դրամ, կրտսեր գիտաշխատող՝ 210.0 հազ. դրամ, գիտաշխատող՝ 276.0 հազ. դրամ, ավագ գիտաշխատող՝ 343.0 հազ. դրամ, առաջատար գիտաշխատող՝ 443.8 հազ. դրամ, գլխավոր գիտաշխատող՝ 552.9 հազ. դրամ, գիտական խմբի ղեկավար՝ 410.0 հազ. դրամ, գիտական ստորաբաժանման ղեկավար՝ 477.2 հազ. դրամ: Նշված գործընթացը կնպաստի գիտության ոլորտը երիտասարդ կադրերով համալրելու խնդրի լուծմանը, գիտական կադրերի սոցիալ-տնտեսական և աշխատանքային պայմանների բարելավմանը, գիտության և տեխնիկայի բնագավառի բարձր որակավորում ունեցող կադրերի թվաքանակի կայուն աճին և գիտական ներուժի արդյունավետ նպատակային վերարտադրության ապահովմանը:

2. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

ՀՀ գիտության ոլորտի 2023-2024 թվականների զարգացման հիմնական թիրախները շարադրված են ՀՀ ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «Գիտության ոլորտին» վերաբերող բաժնով առաջարկվող դրույթներում և ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրում:

Այդ թիրախներն են՝

- մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացում.
- գիտության ոլորտում աշխատողների որակավորման բարձրացում և երիտասարդ կադրերի ներգրավում.
- գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացում.
- գիտության ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործում:

Վերոնշյալ նպատակների ձեռքբերման ուղղությամբ 2023-2025 թվականներին իրականացվելու են հետևյալ միջոցառումները՝

- գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինում ու համատեղ օգտագործման գիտական սարքավորումների կենտրոնների ստեղծում,
- գիտական կենտրոնների վերանորոգում,
- հետազոտության բնագավառով մոտ փոքր գիտական կազմակերպությունները խոշոր գիտական կենտրոններում միավորմանն ուղղված պետական ծրագրերի իրականացում,
- տնտեսության պահանջներից բխող հետազոտությունների պատվերների ձևավորման մեխանիզմների մշակում և ներդրում,
- ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցությանն ուղղված ծրագրերի իրականացում,
- հետդոկտորական հետազոտությունների ծրագրերի իրականացում,
- արտերկրի լավագույն գիտական կենտրոններում գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման միջին և երկարաժամկետ ծրագրերի իրականացում,
- երկակի նշանակության ծրագրերի իրականացում,
- վերահնտեգրման կամ հեռավար ղեկավարվող լաբորատորիաների ստեղծում,
- հասարակական, հայագիտության և հումանիտար գիտությունների բնագավառների հետազոտությունների աջակցությանն ուղղված ծրագրերի իրականացում,
- գերակա ուղղություններով հետազոտությունների աջակցությանն ուղղված ծրագրերի իրականացում,
- հետազոտությունների միջազգային չափանիշների սահմանում և կատարողականի գնահատման մեխանիզմների մշակում և ներդրում,
- աշխարհի առավել զարգացած պետությունների և դրանց գերատեսչությունների կամ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության զարգացման մակարդակի բարձրացում:

Գիտության ոլորտի 2023-2025 թվականների ծախսային գերակայություններն ու դրանց շրջանակներում իրականացվող միջոցառումներն են՝

Գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացում (*«Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված «Կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկի 29-րդ կետ»*)՝

Գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացումն իրականացվելու է հետազոտությունների միջազգային չափանիշների սահմանմամբ և կատարողականի գնահատման մեխանիզմների ներդրմամբ:

Այդ ուղղությամբ նախատեսվում է՝

- գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի աշխատավարձերի նորմավորման գործընթացի իրականացում, 2025 թվականին այն հասցնելով հանրապետության մասշտաբով պետական համակարգում համեմատելի և համադրելի արժեքների,

- գիտական կազմակերպությունների բազային ֆինանսավորման մոդելի վերանայում՝ մինչև 5 տարվա ծրագրային ֆինանսավորման մոդելի ներդրմամբ և առավել արդյունավետ կազմակերպություններում բոնուսային ծրագրերի իրականացում կադրային բազայի ընդլայնման և նոր ստորաբաժանումների ստեղծման կամ նոր կադրերի ներգրավման նպատակով,

- կազմակերպել վերահնտեգրման կամ հեռավար ղեկավարվող լաբորատորիաների ստեղծմանն ուղղված մրցույթ՝ Սփյուռքի ներուժի առավել արդյունավետ ներգրավման նպատակով, նախատեսելով մինչև 2026 թվականն ունենալ Հայաստանի Հանրապետություն վերադարձած շուրջ 60 գիտնական և շուրջ 60 հեռավար ղեկավարվող գիտական խմբեր, որոնք, բացի գիտական ժամանակակից հետազոտություններից, կիրականացնեն նաև բարձր տեխնոլոգիական ոլորտում ստեղծագործական աշխատանքի ունակ կադրերի պատրաստում,

- գիտության ոլորտի կառավարման միասնական էլեկտրոնային հարթակի ներդրում՝ ռեյտինգային համակարգի ներմուծմամբ, որը հնարավորություն կընձեռի առցանց ռեժիմով բոլոր մակարդակներում (անհատ հետազոտողից մինչև գիտական կազմակերպություն) իրականացնել արդյունավետության մշտադիտարկում և ունենալ խնդիրների վաղաժամ

Այդ ուղղությամբ նախատեսվում է ներդնել մի շարք նոր մրցութային ծրագրեր, մասնավորապես՝

- երիտասարդ գիտնականների վերապատրաստման (PostDoc) ծրագիր, նախատեսելով յուրաքանչյուր տարի 6-36 ամսով 12 երիտասարդ գիտնականների վերապատրաստման (PostDoc) կազմակերպում աշխարհի լավագույն գիտաական կազմակերպություններ՝ ՀՀ գիտության և տեխնիկայի գերակա ուղղություններին համապատասխան: Մինչև 2024 թվականը 48 բարձր որակավորում ունեցող գիտնականներ: Միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (Web of Science կամ Scopus) հրատարակումների աճ (քանակ), երիտասարդ և միջին տարիքի գիտնականների թվի ավելացում (մարդ),

- նպատակային ասպիրանտական ուսուցման (PHD abroad) ծրագիր, նախատեսելով յուրաքանչյուր տարի 6-36 ամսով 24 ասպիրանտների (PHD) նպատակային ուսուցման կազմակերպում աշխարհի լավագույն գիտաական կազմակերպություններ՝ ՀՀ գիտության և տեխնիկայի գերակա ուղղություններին համապատասխան: Միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (Web of Science կամ Scopus) հրատարակումների աճ (քանակ), երիտասարդ գիտնականների թվի ավելացում (մարդ):

Պետք է շարունակել իրականացնել, մասնավորապես՝

- ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցությանն ուղղված մրցութային ծրագրի իրականացում,

- հետդոկտորական հետազոտություններին ուղղված մրցութային ծրագրի իրականացում,

- երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տարեկան) հետազոտությունների աջակցության երկամյա, ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտություններին աջակցության անհատական խրախուսման միամյա դրամաշնորհային մրցույթների կազմակերպում,

- գիտական խմբերի մեկնարկային և գիտական խմբերի կամ լաբորատորիաների ամրապնդմանն ուղղված եռամյա դրամաշնորհային մրցույթների կազմակերպում,

- առաջատար հետազոտությունների աջակցության ծրագիր, երբ դրամաշնորհը հատկացվում է գիտական նշանակալի նվաճումներ ունեցող գիտաշխատողին՝ հետազոտական խումբ ձևավորելու և հավակնոտ թեմայով հետազոտական ծրագրեր իրականացնելու համար,

- գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների շրջանակներում կին ղեկավարների առաջխաղացմանն ուղղված եռամյա դրամաշնորհային մրցույթների իրականացում,

- երիտասարդ գիտնականների դպրոցների կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրում,

- երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի ֆինանսավորում:

Մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացում (*«Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված «Կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկի 27-րդ կետ»*)

Գիտական գործունեության արդյունավետության և մրցունակության բարձրացման կարևորագույն գրավականներից է գիտական ենթակառուցվածքների զարգացածությունը, որը հնարավորություն է տալիս իրականացնելու մրցունակ գիտական հետազոտություններ ոչ միայն ժամանակակից գիտական սարքավորումների և նյութերի միջոցով, այլ նաև ընձեռնելով գիտական գործունեության համար բարենպաստ ֆիզիկական միջավայր:

Այդ ուղղությամբ նախատեսվում է՝

- նորարարության և գիտատար ձեռնարկատիրության խթանման և աջակցության մեխանիզմների ներդրումը՝ ստեղծելով գիտությունից նոր բիզնես ոլորտների ձևավորման և բիզնեսից գիտություն պատվերներ տալուն աջակցող կառույց, որը կուսումնասիրի գիտության մեջ առկա և առևտրայնացման ներուժ ունեցող մշակումները և կուղեկցի դրանց առևտրայնացման գործընթացը՝ տրամադրելով խորհրդատվություն և իրավական աջակցություն,

- հետազոտության բնագավառով մոտ փոքր գիտական կազմակերպությունները խոշոր գիտական կենտրոններում միավորմանն ուղղված պետական ծրագրերի իրականացում՝ հետազոտությունների համար ավելի նպաստավոր միջավայրի ստեղծման, ինչպես նաև մարդկային և ֆիզիկական ռեսուրսի արդյունավետ օգտագործման նպատակով,

- ստեղծել գիտությունից բիզնես ռիսկային նախաձեռնությունների գնահատման և ներդրումների ազգային հիմնադրամ:

Պետք է շարունակել՝

- գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինմանն ու համատեղ օգտագործման գիտական սարքավորումների կենտրոնների ստեղծմանն ուղղված մրցութային ծրագրի իրականացումը,

- գիտական կենտրոնների վերանորոգմանն ուղղված մրցութային ծրագրի իրականացումը,

- միջազգային գործընկերության աշխարհագրության ընդլայնումը՝ միջպետական կամ միջգերատեսչական պայմանագրերի հիման վրա, որոնց շնորհիվ աշխարհի առավել զարգացած պետությունների հետ կունենանք համագործակցության ինստիտուցիոնալ մակարդակ, և այդ շրջանակներում կիրականացվեն ինչպես համաաշխարհային նշանակության հետազոտություններ, այնպես էլ շարժունակության մի շարք ծրագրեր,

- Եվրոպական շրջանակային ծրագրերի հետ ասոցացման և շրջանակային ծրագրերում Հայաստանի ակտիվ մասնակցության խթանմանը միտված ծրագրերի իրականացում, որի շնորհիվ կստեղծվեն փորձի փոխանակման նպաստավոր պայմաններ, այնպես էլ հնարավորություն՝ մասնակցելու բազմակողմ հետազոտական մեծ ծրագրերի և զարգացնելու ներքին կարողունակությունները և ենթակառուցվածքները: Մասնավորապես՝ 2021 թվականի նոյեմբերի 12-ին Բրյուսելում ՀՀ և Եվրոպական միության միջև ստորագրվել է Միության «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագիրը, որը վավերացվել է ՀՀ ԱԺ կողմից 2022 թվականի փետրվարի 9-ին: 2021 թվականից ՀՀ գիտության կոմիտեի կողմից ներդրվել է Գիտական, գիտատեխնիկական և գիտատեխնոլոգիական ծրագրերի իրականացման կենտրոնի ստեղծման ծրագիրը, որի շրջանակներում իր գործունեությունն է վերսկսել «Գիտական և նորարարական գործընկերությանն աջակցման կենտրոն» / նախկինում՝ «Գիտական ծրագրերի ինտեգրմանն աջակցության կենտրոն»/ հիմնադրամը, որի նպատակն է իրականացնել գիտության, տեխնոլոգիաների և նորարարությունների ոլորտներում միջազգային կառույցների, այդ թվում՝ «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարությունների Եվրոպական Միության շրջանակային նոր ծրագրի կողմից ֆինանսավորվող դրամաշնորհային ծրագրերում ՀՀ գիտական կազմակերպությունների, բուհերի և առանձին գիտնականների ու գիտական խմբերի մասնակցության ակտիվացմանն ուղղված միջոցառումներ՝ տրամադրելով համապատասխան խորհրդատվություն և տեխնիկական

աջակցություն: 2021 թվականի հոկտեմբերին Կենտրոնը հայտարարել է մրցույթ ԵՄ շրջանակային ծրագրի հայաստանյան հնարավոր մասնակիցների նախագծերի և հայտադիմումների նախապատրաստմանն աջակցություն տրամադրելու նպատակով: Մրցույթի արդյունքում ընտրված 9 հայտատուների համար այժմ անցկացվում են խորհրդատվություններ՝ «Հորիզոն Եվրոպա» ծրագրի շրջանակներում հայտարարված մրցույթների նպատակների և դրանց մասնակցության պայմանների մասին: Շահառուներին կտրամադրվի օժանդակություն հայտադիմումների լրացման ընթացքում: Ծրագիրն իրականացվում է գերմանական GIZ ընկերության և CIVITTA խորհրդատվական ընկերության հայաստանյան գրասենյակի աջակցությամբ:

Միջազգային համագործակցության ընդլայնման նպատակով պետք է շարունակել՝

- համաֆինանսավորման սկզբունքով միջազգային ծրագրերի իրականացումը: Ներկայումս համաֆինանսավորման սկզբունքով ֆինանսավորվում են միջազգային համագործակցության 72 ծրագիր, հայ-գերմանական և հայ-չինական մեկական լաբորատորիա, գործում են ՀՀ ԳԱԱ ԻԿՐԱՆԵՏ կենտրոն միջազգային կազմակերպությունը, Ա. Սալամի անվան տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոնի (ICTP) փոխկապակցված կենտրոնը՝ Երևանի պետական համալսարանի և Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ) Տեսական ֆիզիկայի համատեղ լաբորատորիայի հենքի վրա,

- անդամակցությունը գիտական կառույցներին/համագործակցություններին՝ Միջուկային Հետազոտությունների Միացյալ Ինստիտուտի (ՄՀՄԻ – JINR), Բարձր Էներգիաների Ստերեոսկոպիկ Համակարգի (ԲԷՍՀ – H.E.S.S.):

Վերը շարադրված թիրախների ապահովման նպատակով 2023-2025 թվականներին «1162 Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների» ծրագրի համար անհրաժեշտ է հատկացնել համապատասխանաբար՝ 35,025,706.0, 42,267,226.4 և 60,875,315.4 հազ. դրամ՝ 2022 թվականին հատկացված 24,546,616.7 հազ. դրամի փոխարեն:

2023-2025 թվականներին շարունակվելու են պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, պետական նպատակային-ծրագրային և պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորումները: Գիտության ոլորտի 2023-2025 թվականներին իրականացվող ընդհանուր ծախսերը՝ ըստ ծախսային ուղղությունների բերված է Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագրի 2022-2025 թվականներին իրականացվող ընդհանուր ծախսերը՝ ըստ ծախսային ուղղությունների:

(հազար դրամներով)

		2022թ.	փոփոխությունը %ով	2023թ.	փոփոխությունը %ով	2024թ.	փոփոխությունը %ով	2025թ.
	Գիտություն (առանց կապիտալ ծախսերի), ընդամենը	24546616.7	42.69	35025706.0	20.67	42267226.4	44.02	60875315.4
	այդ թվում՝							
1.	Բազային	17759476.7	47.61	26214468.7	18.08	30952786.2	45.94	45172949.4
	տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	72.35		74.84		73.23		74.21
	այդ թվում՝							
	գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ	842000.0	0.00	842000.0	0.00	842000.0	0.00	842000.0
	տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	3.43		2.40		1.99		1.38
2.	Նպատակային-ծրագրային	135960.0	200.00	407880.0	33.33	543840.0	25.00	679800.0
	տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	0.55		1.16		1.29		1.12
3.	Պայմանագրային (թեմատիկ)	6651180.0	26.34	8403357.3	28.17	10770600.2	39.48	15022566.0
	տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	27.10		24.00		25.48		24.67